ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **23/սեպտեմբերի/2023 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N10
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Ս. Սարգսյանը, Ա. Հովհաննիսյանը, Մ. Հակոբջանյանը և Ժ. Բարայանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյանը, գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Ա. Բագրատյանը և Ս. Մկրտչյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը, գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյանը, առաջատար մասնագետի պաշտոնակատար Մ. Մարգարյանը:

<u>Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը</u>

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին՝ 2023 թվականի սեպտեմբերի 26–ի նիստի հետևյալ *օրակարգը*.

1.1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկի համայնքապետարանի հաշվեկշռում առկա տրակտորը և կցորդները վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4 Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով փոխանցելու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 15-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի N 39-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյան

1.8. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյան

1.9. Դրամական օգնություն տրամադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Մ. Մարգարյան

1.10. Ջերմուկ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքի ղեկավար Վ. Արսենյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----------10---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------9---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------1 (Ա. Հովսեփյան)----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-ին հոդվածին համապատասխան՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------9---------- Դեմ----------1---------- Ձեռնպահ----------0----------

(Ա. Հովսեփյան)

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ՏՐԱԿՏՈՐԸ ԵՎ ԿՑՈՐԴՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Տալ համաձայնություն Ջերմուկի համայնքապետարանի հաշվեկշռում առկա Беларус 82.1 մակնիշի անիվավոր տրակտորը, խոտի մամլիչը և խոտ հավաքող 5-Մ (3 միավոր) մեքենա-մեխանիզմները (այսուհետ՝ շարժական գույք) յուրաքանչյուր տարվա մայիս–սեպտեմբեր ամիսներին Գնդեվազ գյուղի բնակիչ Հայրապետ Մկրտչյանին վարձակալությամբ տրամադրելու առաջարկությանը՝ վարձավճարի չափը սահմանելով նշված ժամանակաընթացքի համար 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ համայնքի բյուջեի եկամուտների հավելյալ աղբյուր ունենալը:

2. Իրավունք վերապահել Ջերմուկի համայնքի ղեկավարին Գնդեվազ գյուղի բնակիչ Հայրապետ Մկրտչյանի հետ կնքելու շարժական գույքի վարձակալության տրամադրման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------9---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----1----------
(Ա. Հովսեփյան)

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի վարչական տարածքում՝ Մ. Մաշտոցի փողոցի N 9 հասցեում գտնվող 10-002-0026-0158 կադաստրային ծածկագրով 0,33383 հա մակերեսով հողամասը համայնքի կարիքների համար՝ առողջության կենտրոնի նոր շենքի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման

կոմիտեին սեփականության իրավունքով փոխանցելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Լիազորել համայնքի ղեկավարին համայնքի անունից պետության՝ ի դեմս ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի, հետ կնքելու նվիրաբերության պայմանագիր և կատարելու հողամասի հանձնման աշխատանքները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------10 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 15-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելված 1-ում՝

ա. «Տեխնիկական սպասարկման անձնակազմ-7» տողում «7» թիվը փոխարինել «9» թվով

բ. «Ընդամենը՝ թվաքանակ- 26» տողում «26» թիվը փոխարինել «28» թվով:

2) որոշման հավելված 2-ում՝

ա. «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» բաժինը 24-րդ տողից հետո լրացնել նոր՝ 25-րդ և 26-րդ տողերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

25	անցակետի հսկիչ	1	137500	137500
26	բանվոր	1	164000	164000

3) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» բաժինն ամփոփող «Ընդամենը» տողի «5,5» թիվը փոխարինել «7.5» թվով, իսկ «893550» թիվը փոխարինել «1195050» թվով

5) «Ընդամենը/աշխատակազմ» տողի «23,5» թիվը փոխարինել «25,5» թվով, «5231490» թիվը փոխրաինել «5532990» թվով,

6) «Ընդհանուրը» տողի «30,5» թիվը փոխարինել «32,5» թվով, իսկ «7721172» թիվը փոխարինել «8022672» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 1-ից:

Կողմ----9---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----
(Ա. Հովսեփյան)

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի «Ջերմուկ համայնքի «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 39-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Աշխատակիցների թվաքանակը՝ 68» տողում «68» թիվը փոխարինել «69» թվով:

2) որոշման հավելվածի «գյուղական բնակավայրերի կոյուղագծերի, ջրագծերի, ոռոգման համակարգի սպասարկում և ընթացիկ նորոգում» բաժնի՝

ա) գլխագրում և տողում «գյուղական» բառը փոխարինել «համայնքի» բառով

բ) տողի «2» թիվը փոխարինել «3» թվով, «238000» թիվը փոխարինել «357000» թվով և «2856000» թիվը փոխարինել «4284000» թվով

գ) «ԸՆԴԱՄԵՆԸ» տողի՝ «2» թիվը փոխարինել «3» թվով, «238000» թիվը փոխարինել «357000» թվով և «2856000» թիվը փոխարինել «4284000» թվով

դ) «ԸՆԴՀԱՆՈՒՐԸ» տողի՝ «69» թիվը փոխարինել «70» թվով, «9707184» թիվը փոխարինել «9826184» թվով և «114236209» թիվը փոխարինել «115664209» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 1-ից:

Կողմ----10---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի վարչական տարածքում՝ Գնդեվազ գյուղում գտնվող՝ համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ

ա/ 0.12914 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0214-0119) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 20 000 (քսան հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի,

բ/ 2,61655 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0201-0132) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 80 000 (ութսուն հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի,

գ/ 1,52896 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0201-0133) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 40 000 (քառասուն հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----9------ *Դեմ*----1---------- *Ձեռնպահ*----0----------

(Ա. Հովսեփյան)

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

\/Զեկ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ

ա/ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մ. Ստեփանյան փողոցի N 15/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն (վկայական՝ 15052023-10-0008) հանդիսացող 10-002-0031-0244 կադաստրային ծածկագրով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,0024 հա) հասարակական կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 100 000 (հարյուր հազար) դրամ:

բ/ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 10-016-0216-0118 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 30032023-10-0017) հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ հողեր, մակերեսը՝ 0,17106 հա) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 50 000 (հիսուն հազար) դրամ

գ/ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 41 հասցեում գտնվող համայնքային սեփականություն (վկայական՝ 29062023-10-0008) հանդիսացող 10-002-0458-0038 կադաստրային ծածկագրով հողամասը (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, մակերեսը՝ 0,32353 հա) գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 6110000 (վեց միլիոն հարյուր տաս հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----9---- *Դեմ*----1---- *Ձեռնպահ*----0----

(Ա. Հովակիմյան)

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՈՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2023 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից 100000-ական (հարյուր հազարական) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի բնակիչներ Լուսինե Ավետիսյանին, Վարդան Վարդանյանին և Արմեն Հարությունյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----10---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի հոկտեմբերի ~~25~~-ին, ժամը՝ 15.00-ին:
29

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----10---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	բացակա
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավար

Վահագն Արսենյան _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը՝ _____